Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

28 հուլիսի 2015 թվական

---

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի աշխատակարգը>>՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախմբի աշխատակարգը>>՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել <<Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախմբի փորձագետների ընտրության կարգը>>՝ համաձայն N 3 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

2015 թ. հուլիսի 28
Երևան

Հավելված N 1

ՀՀ կոռուպցիայի դեմ
պայքարի խորհրդի 2015 թ.
հուլիսի 28-ի որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի թիվ 14 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանրային կառավարման համակարգում հավանության արժանացած կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի՝ Խորհուրդը հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը համակարգող, ոլորտային ծրագրերի իրականացման նկատմամբ հսկողություն ապահովող մարմին է:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Խորհուրդը՝ համաձայն ՀՀ կառավարության 2015թ. փետրվարի 19-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի

հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N 165-Ն որոշման՝

1) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարությանը.
2) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.
3) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերին.
4) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.
5) համակարգում է հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների իրականացումը, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը՝ պետական մարմիններից պահանջելով և ստանալով անհրաժեշտ նյութեր ու տեղեկատվություն, կազմակերպելով և անցկացնելով հանդիպումներ, քննարկումներ, լսումներ, քննարկելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա խնդիրները և առաջարկելով դրանց լուծման հնարավոր տարբերակներ.
6) հսկողություն է իրականացնում հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների կատարման, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի նկատմամբ՝ ներկայացնելով առաջարկություններ պատասխանատու մարմիններին, պահանջելով հաշվետվություններ և վերլուծություններ, կազմակերպելով ու անցկացնելով քննարկումներ, հանդիպումներ, լսումներ.
7) քննարկում է հակակոռուպցիոն ծրագրերի գնահատման (մոնիթորինգի) արդյունքները և հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների

հիման վրա առաջարկություններ ներկայացնում պատասխանատու մարմիններին.

8) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում համագործակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ, այդ թվում՝ համակարգված հանդիպումների միջոցով: Ընդ որում, համակարգված հանդիպումների ժամանակ քննարկումներ են տեղի ունենում իրականացված միջոցառումների, խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև պատշաճ հաղորդակցություն և արդյունավետ համագործակցություն: Քննարկումների արդյունքում ներկայացված կարծիքները խորհուրդը կարող է ներառել իր նախապատրաստած առաջարկությունների մեջ.

9) հաստատում է խորհրդի աշխատակարգը.

10) հաստատում է հանձնախմբի աշխատակարգը.

11) սահմանում է փորձագետների ընտրության կարգը, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշները:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են Խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

5. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին:
6. Խորհրդի նիստերի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են նիստը նախագահողը և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետը: Խորհրդի ընդունած որոշումները համարվում են արձանագրության մաս և որպես հավելված ստորագրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետի կողմից:
7. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե խորհրդի որևէ անդամ խորհրդի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է խորհրդի որոշմանը, և դրա մասին գրառում է կատարվում խորհրդի նիստի արձանագրության մեջ:
8. Խորհրդի յուրաքանչյուր նիստի ավարտից հետո տասնօրյա ժամկետում նիստի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջում:
9. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում հարցի քննարկումը կարող է տեղափոխվել խորհրդի հաջորդ նիստ:
10. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին տեղեկատվությամբ:
11. Խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում խորհրդի անդամը տեղեկացնում է խորհրդի նախագահին:
12. Խորհրդի հրավերով խորհրդի նիստին կարող են մասնակցել քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ անձինք:

13. Խորհուրդն ապահովում է իր աշխատանքների լուսաբանումը:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքը.

2) խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.

3) Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնում խորհրդի գործունեության, այդ թվում՝ համակարգված հանդիպումների արդյունքների, ձեռնարկված քայլերի և ստացված արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն.

4) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը կամ նիստերի վարումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.

5) առաջադրում է օրակարգը, որը քննարկվելիք այլ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերով գրավոր կամ էլեկտրոնային եղանակով խորհրդի անդամներին է հանձնվում ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԸ

15. Խորհրդի անդամը

1) մասնակցում է խորհրդի նիստերին.

2) ներկայացնում է առաջարկություն խորհրդի օրակարգում ներառվելիք հարցերի, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա հիման վրա մշակված ոլորտային ծրագրերի, ինչպես նաև խորհրդի կողմից քննարկվող այլ հարցերի վերաբերյալ.

3) իրականացնում է խորհրդի որոշումներից և սույն կարգով սահմանված խորհրդի լիազորություններից բխող այլ գործառույթներ:

VI. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Խորհրդի քարտուղարությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը:

17. Խորհրդի քարտուղարությունը՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին.

2) ապահովում է խորհրդի նիստի որոշումների (առաջարկությունների) նախագծերի կազմումը.

3) հետևում է խորհրդի նիստի արձանագրությունում արտացոլված որոշումների և հանձնարարականների կատարմանը և խորհրդի նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) Խորհրդի անդամների հետ համաձայնեցման նպատակով գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կազմակերպում է խորհրդի արձանագրությունների տրամադրումը անդամներին, իսկ ստորագրված արձանագրություններն անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մարմիններին և այլ կազմակերպություններին:

18. Մինչև արձանագրությունների ստորագրումը, դրանք ներկայացվում են Խորհրդի անդամների համաձայնեցմանը, որոնց վերաբերյալ վերջիններս դիրքորոշում հայտնում են 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժնի պետ **Կ. Ասատրյան**

Հավելված N 2

ՀՀ կոռուպցիայի դեմ
պայքարի խորհրդի 2015 թ.
հուլիսի 28-ի որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ) կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախմբի (այսուհետ՝ Հանձնախումբ) աշխատանքների կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Հանձնախմբն՝ ըստ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի թիվ 14 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգի՝ աջակցում է ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի մշակմանը, ծրագրերի մոնիթորինգին, իրականացնում է հակակոռուպցիոն ծրագրերի մասնագիտական գնահատում, կատարված ծրագրերի վերաբերյալ ներկայացնում և ամփոփում է հաշվետվություններ:

II. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Հանձնախումբը կազմված է անկախ փորձագետներից: Հանձնախմբի փորձագետները ներգրավվում են մրցութային հիմունքներով:
4. Փորձագետների ընտրության կարգը, ինչպես նաև չափանիշները սահմանվում են խորհրդի կողմից:
5. Հանձնախումբն իր գործառույթներն իրականացնում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N 165-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում):
6. Որոշմամբ սահմանված գործառույթներն իրականացնելիս՝ Հանձնախումբը (ոլորտի փորձագետը) մշակված ծրագրերի նախագծերը, առաջարկությունները, մոնիթորինգի արդյունքները, միջանկյալ և ամփոփ հաշվետվությունները, զեկույցները և այլ փաստաթղթեր Խորհրդի նիստից առնվազն 15 աշխատանքային օր առաջ ներկայացնում է ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժին (այսուհետ՝ Մոնիթորինգի բաժին)՝ Խորհրդի նիստին նախապատրաստելու համար:
7. Հանձնախմբի փորձագետները կարող են մասնակցել Խորհրդի նիստերին, հարցերի վերաբերյալ ներկայացնել մասնագիտական դիրքորոշում, կարծիք, պատասխանել Խորհրդի անդամների հարցերին:
8. 6-րդ կետում նշված փաստաթղթերն ու դրանց նախագծերը Մոնիթորինգի բաժնի կողմից ուղարակվում են ոլորտի պետական լիազոր մարմին (անհրաժեշտության դեպքում նաև այլ պետական և (կամ) ոչ պետական կառույցներ) կարծիքի և (կամ) ի գիտություն:

9. Սույն աշխատակարգի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված գործընթացներն ապահովելու համար Հանձնախումբն (ոլորտի փորձագետը) իր գործառույթներն իրականացնելիս մշտական աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում Մոնիթորինգի բաժնի հետ: Մոնիթորինգի բաժնի հայցման (գրավոր կամ բանավոր) դեպքում տրամադրում է անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր, մասնագիտական փորձաքննության ուղարկված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացություններ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր հայցման մեջ նշված ժամկետներում:
10. Հանձնախմբի (ոլորտի փորձագետի) և Մոնիթորինգի բաժնի միջև համագործակցությունն ապահովվում է մշտական աշխատանքային հանդիպումներով, հեռախոսային ու էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժնի պետ **Կ. Ասատրյան**

Հավելված N 3

ՀՀ կոռուպցիայի դեմ
պայքարի խորհրդի 2015 թ.
հուլիսի 28-ի որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՆԿԱԽ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից ստեղծված անկախ փորձագետներից կազմված մշտապես գործող փորձագիտական հանձնախմբի (այսուհետ՝ Հանձնախումբ) փորձագետների և միջազգային փորձագետների ընտրության հետ կապված հիմնական հարաբերությունները:

2. Փորձագետները ներգրավվում են մրցութային հիմունքներով:

II. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

3. Հանձնախմբի ձևավորումը և Միջազգային փորձագետների ընտրությունն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև 2013 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված՝ <<Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված համագործակցության>> համաձայնագրով նախատեսված դրույթների:

III. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

4. Հանձնախմբի ձևավորման և միջազգային փորձագետների ընտրության մրցութային կազմակերպչական խնդիրների լուծումն ապահովում է ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը:

5. Հանձնախմբի ձևավորման և միջազգային փորձագետների ընտրության մրցույթների ընդհանուր կազմակերպումն ու դրանց նկատմամբ հսկողությունն իրականացնում է Խորհրդի անդամ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը: Հանձնախմբի և միջազգային փորձագետների ընտրության լրացուցիչ չափանիշներ կարող է սահմանել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը՝ քննարկելով շահագրգիռ պետական մարմինների հետ:

IV. ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

6. Հանձնախմբի փորձագետները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝
   1) իրավաբանության, հանրային կառավարման, տնտեսագիտության կամ առնչվող ոլորտների բարձրագույն կրթություն,
   2) հակակոռուպցիոն, հանրային քաղաքականության, արդյունավետ կառավարման ոլորտների առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ հատկապես անցումային շրջանում,

3) հակակոռուպցիոն ռազմավարության կազմման լավագույն փորձի և դրա իրականացման, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն գործունեության վերաբերյալ գիտելիքների առկայություն,
4) միջազգային կազմակերպությունում աշխատանքային փորձ (առնվազն մեկ տարվա) հակակոռուպցիոն քաղաքականության և հակակոռուպցիոն ծրագրերի մշակման ոլորտներում, հակակոռուպցիոն ոլորտում կարիքների գնահատման, ռիսկերի վերլուծության, ռիսկերի նվազեցման և չեզոքացման ծրագրերի մշակման ունակություն և որևէ երկրում (Հայաստանից բացի) նման ծրագրերին մասնակցություն:

7. Միջազգային փորձագետները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝
   1) իրավաբանության, հանրային կառավարման, տնտեսագիտության կամ առնչվող ոլորտների բարձրագույն կրթություն,
   2) հակակոռուպցիոն, հանրային քաղաքականության, արդյունավետ կառավարման ոլորտների առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ հատկապես անցումային շրջանում,
   3) միջազգային հակակոռուպցիոն ռազմավարության կազմման լավագույն փորձի և դրա իրականացման, ինչպես նաև ՀՀ հակակոռուպցիոն գործունեության վերաբերյալ գիտելիքների առկայություն,
   4) աշխատանքային փորձ հակակոռուպցիոն քաղաքականության և հակակոռուպցիոն ծրագրերի մշակման ոլորտներում, հակակոռուպցիոն ոլորտում կարիքների գնահատման, ռիսկերի վերլուծության, ռիսկերի նվազեցման և չեզոքացման ծրագրերի մշակման ունակություն,
   5) հստակ գործողությունների ծրագրի և արդյունավետ մոնիթորինգային ծրագրերի ձևակերպման համար մեթոդական աջակցություն տրամադրելու ունակություն, ինչպես նաև հակակոռուպցիոն ոլորտում շահառուներին բացահայտելու, նրանց հետ հաղորդակցվելու, տարբեր մշակութային և աշխատանքային պայմաններում հարմարվելու ունակություն:

8. Սույն որոշման 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված չափանիշների շրջանակում, ըստ ընտրված հակակոռուպցիոն ոլորտների, մանրամասնված (դետալացված) չափանիշները սահմանում է ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը՝ քննարկելով շահագրգիռ պետական մարմինների հետ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
հակակոռուպցիոն ծրագրերի
մոնիթորինգի բաժնի պետ **Կ. Ասատրյան**